



ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 05 » Տեպրև 2022թ.

ՀՐԱՄԱՆ N 209-Ղ

«ԼՅՈՒՖԹՀԱՆՁԱ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի փետրվարի 11-ի N 41-Ա հրամանը և «Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» ավիաընկերության 2022 թվականի մայիսի 2-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով՝ 2022 թվականի հունիսի 1-ից մինչև 2022 թվականի հուլիսի 30-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և

տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի փետրվարի 11-ի N 41-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/-Ֆրանկֆուրտ/EDDF/ երթուղով իրականացվող հավելյալ չվերթներ, որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի փետրվարի 11-ի N 41-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

 Восстановимая подпись

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏԿՈՒԹՅՈՒՆ 068/2022
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕՂԱՆԱԿ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՄՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕՂԱՅԻՆ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 068/2022
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Լյուֆթհանզա գերմանական ավիաուղիներ» «Lufthansa German Airlines»
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A319-112, A319-114, A320-214
Հաճախականությունը Frequency	շաբաթական 2 չվերթ 2 flights per week
Երթուղին Air route	Ֆրանկֆուրտ/EDDF/-Երևան/UDYZ/- Ֆրանկֆուրտ/EDDF/ Frankfurt/EDDF/-Yerevan/UDYZ/-Frankfurt/EDDF/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	01/06/2022 մինչև 30/07/2022 01/06/2022 till 30/07/2022

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ACTING CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

ՔՈՒՆԻԿԱՆ ՍԻԳՆԱԿԱՆ ԹՅՈՒՆ

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN MIHRAN 3308540266

05.05.2022
(տալու ամսաթիվը)
(date of issue)